Աննա Սարգսյան

Տե՛ր իմ, թող քո կամքը լինի...

Ձյունաճերմակ հոգի ունես.
այն ցոլցլաց հայացքիդ մեջ,
Այնպե՛ս հստակ, շոշափելի,
որ ցանկացա զգվել նրան ողջ էությամբ:
Յուրօրինակ հանդարտություն կա քո կյանքի
փոթորկալից անհարթության երակներում, մի ջերմարան...
Նշան արի քո սրտի մեջ, ու...այդ պահից
աղոթարանն իմ՝ մերկ հոգու առա ձեռքս.
դա սփոփանքի մի տեսակ է, մի զարմացիր...
Աղոթքներս նույն սկիզբն ունեն. <<ՏԵՐ ԻՄ ,թող քո կամոք լինի՝
իմ սրտի կամքն ու իմ սերը...>>...
Նույնիսկ վերջն է , դե, անփոփոխ, ահա. <<ՏԵՐ ԻՄ, գիտեմ, որ քեզ ու
քո փառքին չվստահել չի կարելի.
դա է սերը...>>:
Սպունգի պես, քեզնից ելնող ողջ ապրումներն ու <<ժեստերը>>
և մինչև իսկ զավեշտները ներարկել եմ ուղեղիս մեջ.
պարզվեց, ահա, սփոփանքի երկրորդ ձևը...
Ամենազոր ոգեշնչման ծնունդ դարձար,
երախտապարտ հոգիս ցնցվեց ու զարմացավ.
- Որտեղի՞ց ինձ այս պարգևը ...
Ռեբուսի պես դու փարվեցիր իմ աշխարհին,
պարուրեցիր հոծ լիությամբ, բայց...
թողեցիր վերլուծելու ամենաբա՛ղդ ու սքանչելի՛

միա՛կ ձևը.
այն է՝ ՍԵՐԸ...

Դիլիջան